



6. ԹԱԿԱՎՐՈՒ ԾԱՌԵՆ

Մեկ թակավորը կեղի, էնոր մեկ ծառե՛մ կեղի: Էտա ծառեն օրըմ կերթա սարի մեչ կը ֆըռա, մեկ խավքիւ թերուռ կը կընդընի, կը պերա:

Էտա՛ խավքիւ թերուռ էմալ սիրուռ կեղի, օր թակավոր կը տանի, տընա՛ ուր հողի մեչ:

Վերճ էնու վոգիր կը գա՛, կը տեսի՛ Էտա թերուռ:

Կասա. - Թակավո՛ր ապրած, էսա թերուռ ո՞ր տեղից ինգե քիւ ծեռ:

Կասա. - Ծառեն ա պերե:

Կասա. - Էսա թերուռ էնքան խորոտ ա, ապա թերուռի տեր ինչքա՞ն խորոտ ա, ծառեն խըրկա, թ՛երթա խավքյն պերա:

Թակավոր կասա. - Վոգի՛ր, էտա խավքիւց թերուռ մ՛իմգեր էր, խեղճ տըղեն խավքյ ո՞ր տեղեն պըռնա, պերա:

- Չէ՛, - կասա վոգիր, - թերուռ պերող խավքյն էլ կանա պերա:

Էն ժաճանակ թակավոր կը կանչա ծառային, կասա. - Յա՛ն խավքյ կը պերես, յա՛ն քիւ վիզ կը գաճիմ:

Տըղեն կերթա սենյակի մեչ լա՛, լա՛ չուր առավոտուռ, օր էրթա խընդ խավքյ:

Առավոտման դեխ կը քըռնի:

Քըռնելու պես մեկ ըխթյար մարթ կը գա՛ էրագ, կասա. - Տըղա՛, ընչի՞՝ կը լա՛ս, կը մըտածես, ի՞նչ ա էղեր:

Կասա. - Չէ՞ թակավոր ընծնե խավքյ կուգա՛, ես ո՞ր տեղեն պերեմ:

Ըխթյար կասա. - Ես ի՛նչ օր կասիմ, իմ խոսքով էրա: Առա՛վոտուռ էլի՛, գըռնա՛ սար, էտա խավքյ էնու պիւն շիմեր ա թըզի ծառի մեչ: Կը պաղկըվիս թըզի ծառի մեչ, եսի օր գլիշեր էնի կը գա՛, կը նըստի էնու պըռնա՛ն վերեն, ծեռ կը թալես, էնի կը պըռնես:

Տըղեն եփ օր քընուց կիշարնա, էտա էրազ օր տեսեր ա, էփեջն սիրտ կուրախնա:

Էն ժամանակ տըղեն կերթն սար, թըզի ծառըմ կը կընդի, կը մըտի մեջ չուր հիրիկուն: Իրիկուն, օր խավքը գն, կը թառի էնու պըննան վեր, ինքը ծեռ կը թալն, խավքուն կը պըռնա, կը պերա:

Եփ օր կը պերա թակավորին, թակավոր կը տեսնի, շատ կուրախնա:

Վերձ վոզիր կը գն, կը տեսնի, կասա. - Տեսա՞ր, թակավոր, ի՞նչըխ խավքը էպե: Ծանխա՛, թ'երթա Թաչկաթ քնդաք, էնտեղաց թակավորի ախչիկ քյե խամար պերա:

Թակավոր կը կանչա ծառային, կասա. - Տ'երթաս Թաչկաթ քնդաք, թակավորի ախչիկ ձի խամար պերես:

Տըղեն գըննաց ուր սենյակ, էլն՝ց, էլն՝ց, ու քուն տարավ, քընավ:

Քընեւլու մեջ էտա խալիվոր էկավ էնու էրազ:

Ասաց. - Տըղեն՛, ինչի՞ կը լնս:

Ասաց. - Ես չըլնամ, վո՞ն տը լն, ես ի՞նչըխ տ'երթամ Թաչկաթ քնդաք: Թակավոր տըրե վըր ձի, կասա. «Տ'երթաս Թաչկաթ, թակավորու ախչիկ պերես ձի խամար»:

Էն ժամանակ խալիվոր ասաց. - Մը՛ վնխենա, էլի՛, քու ճանքն պըռնա՛, գըննա՛, ես միշտ, միշտ քու խետն եմ:

Տըղեն առավոտուն էլնվ, էնու խաց էտի տուրկի մեջ, ինգե սարեր, ծորեր, կերթա: Ծանքնխն էլ չըգյիտի, ծըռու պես կերթն:

Գըննաց, գըննաց, գյիշեր մընաց սարի մեջ:

Տեսավ, օր մարթուն՝ մըռմըռոց կը գն:

Գըննաց, կան էկավ, տեսավ, օր մեկ մարթըմ, գըլիխ վեր թալած են խոր վեր: Թնլեց, մարթու ոտներ պըռնեց, քնշեց, խորեն խանեց տուս:

Ասաց. - Ծո՛, մա՛րթ, տու էսա սարի խորի մեջ ի՞նչ կանես, քյե վո՞ն ա թնլե էսա խոր վե:

Ասաց. - Էսա քննի՛մ ժամանակ խորի մեջ անոթի եմ, խաց տու ուտեմ, օր սորա իմ գըլխու գնլած քյե ասեմ:

Խաց էտու կերավ, էնու գըլխու գնլած պատմեց:

Ասաց. - Դն՛, մա՛րթ, ես հնվնլ կոր չեր: Ես թակավորի տըղա էր: Քննի ախչիկ գավակ էղեր իմ խոր, համա էն օր, օր

եղեր, մեկէլ օր իմ խեր էնու վիզ կը կըտրեր: Ես էլ շատ կուզեր՝ ծի քուր էլնէր:

Էն մեկ օր ասի. - Թակավո՛ր, օր ախշիկ եղի, տու ծիկ, հըմե-
նին քուր կա, ծիկ չըկա:

Իմ մեր կանաւ, ախշիկ էպե, իմ խեր էտա ախշիկ էտու ծիկ,
ասաց. - Ա՛ռ, գընա՛ ուրիշ երկիր, իմ խողի մեջ մը՝ մընա:

Ես էլ առի ախշիկ, փաթաւթեցի, գացի մեկ սարի՛մ մեջ:
Օխշըրի կաթ, կովու կաթ պերի, կերցուցի, չու՛մ ախշիկ ճոջցաւ:
Դիրսվան ավչութեն կեներ, կը պերեր, միս կէփեր, կուտենք:

Ախշիկ եղաւ տասնուխինգ տարեկան: Օրըմ ես գացեր եր
ավչութեն, մեկ տըղե՛մ կը գա, էն տեղ վե կընցի:

Ախշիկ տըղին կասա. - Արի՛, ծի ա՛ռ:

Տըղեն կասա. - Ընչի՞, տաւ տեր-տիրական չունի՞ս:

Ասեր ա. - Մեկ ախպեր ունիմ:

Կասա. - Օր ես քյե առնիմ, քու ախպեր ծի կը սպանա:

Վերճ ախշիկ կասա. - Տըղա՛, տաւ էտա տեղ պատրաստ կա-
ցիր, եփ հիրիկուն իմ ախպեր կը գա տուն, ես էնոր էմալ վարպե-
տությամբ կապեմ, արե համա գա՛ր, ըսպանա:

Ասաց. - Ես էկա հիրիկուն, խաց կերա, քընա: Իմ քուր գյի-
շեր էլեր էր, իմ ծեռ, ոտ լավըմ կապեր էր:

Մեկ էլ տեսա՝ հերի տըռնից իմ քուրոջ ծեն կը գեր. - Տըղա՛,
արի՛, արի՛:

Ես էսպես էլա, տը մըստեր՝ տեսա իմ ոտ, ծեռ կապուկ էր:

Ասի. - Վա՛յ, էսա իմ ոտ, ծեռ վո՞ն ա կապե:

Մեկէլ տեսա, օր իմ քուր ու տըղե՛մ մըտան ներս:

Տըղեն էսպես իշկեց ծի, ասաց. - Վա՛յ, ես քու ախպոր աչկե-
րուց կը վախնամ:

Ախշիկ ասաց. - Մը՛ վախենա, ես էնպես եմ կապե էնու ծեռ,
ոտ, օր էն չըկանա հիրար առնի:

Համա փետ մ՛առաւ, էգա՛ր իմ գըլխուն:

Ու ասաց տըղային. - Դե՛, իմ ախպեր մորթա՛:

Տըղեն ասաց. - Չըմ մորթե, մեղք ա, աչկեր խանցենք, տա-
նենք թալենք էնա խոր վե, չու՛մ մեռնի:

Իմ աչկեր խանցեցին, դրեցին իմ քոբ, ծի թալեցին էսա խորը
վեր, մընացի էն տեղ, չու՛մ տաւ էկար, ծի խանցեցիր: Իմ գըլխու
գալած էսին ա:

Էտա պատմության մեջ թակավորու ծառեն տեսավ, որ մեկ կոր եղվընիկ, մեկ էլ սաղ կը գան: Էն սաղ կամաջ թուփըն պըռներ էր ուր պերան, կը լարեր կորու հիդև: Պըռնեց կորուն, էտա թուփ քըսեց էնու աչկեր, աչկեր ժըրավ: Թըռան, գանցին ու էտա թուփ թողին էն տեղ:

Ծառեն ասաց. - Տ'էնիմ, էսա մարթու աչկեր տը տընիմ ուր տեղ, քըսիմ էնու թուփ, բալկո էսա մարթու աչկերն էլ ժըրի:

Թուփ էպե, աչկեր տըրեց ուր տեղ, թուփ թաթսեց ճուր, քըսեց էտա մարթու աչկերաց, աչկեր ժըրավ, խընդրանց ճամբանս գանցին:

Գանցին, մեկ հերին ռաստ էկան: Օր տը մըտնեն էն հերի մեջ, էտա մարթ տեսավ, որ քուր միս ու սոխ կը պըրտեր, որ կերակուր էփեր:

Ախջիկ օր ուր ախպեր տեսավ, զըզվանց:

Ախպեր ասաց. - Ընչի՞ կը զըզվանս, տու մընացիր քու չարության մեջ, ես կերթամ խընդ իմ գործին:

Էտա էրկու մարթ ժամանակըն գանցին խընդրանց, դորսվան էնոնց ճամբանս պաժնըվավ:

Ինքյն ուր ճամխով գըռնաց խընդ ուր խոր երկիր: Ծառեն գըռնաց խընդ ուր քաղաք՝ Թաչկաթ:

Ծամբանս գըռնաց, տեսավ, օր ծուկըն ծովու տալդեն թալեր ա, չըկանա մըտի մըջ ճըրուս, մացեր ա վըր ավազին:

Ինքյն գըռնաց, կըլորեց, մըլեց ծով:

Ծուկ օր մըտավ ծովու մեջ, ասաց. - Մա՛րթ, տու իմ կյանք ազատեցիր, արի՛ իմ թերուռից մե քիչ պա՛մ տամ քյե, ի՛նչ ժամանակ տու նեղ ընգիս, տաս կրակ, ես քյե կը խասիմ:

Մարթն առեց թերուռ, էտիր ուր ջիբի մեջ ու գըռնաց ճամբանս:

Գըռնաց սար, տեսավ, օր օձըն փաթաթվե ծառ վե, կէլնի: Խավքու՛մ պուս կեր էտա տեղ, օր խավքու ծաքյերն ուտի:

Վիշապուն ըսպանեց, միսն էտու, ծաքյեր կերան, էկավ, նըստավ ծառի տակ:

Էն ժամանակ Սինանա խավքյ վերուց գըլխը վըրավ էկավ, օր էտա մարթ ուտա, վըռնասա:

Ծաքյեր էլան մոր հանեճ, ասին. - Էտա մարթուն պան մ'էնի, էտա մարթ մեր կյանք ազատեց:

Ասաց. - Մա՛րթ, տա՛ւ աղեկութե՛ն ես էրե: Արի՛ ի՛մ թեբուռից մեկը տամ քյե, է՛ն ժա՛մանակ, օր տա՛ւ նեղ ընգիս, ես քյե կը խասի՛մ, թե տա՛ւ է՛ն թեբուռ տաս կրակ:

Մարթն առեց թեբուռ, ընգա՛վ ճա՛մքա՛խ:

Գյընա՛ց, գյընա՛ց, սարի մե՛ջ մեկ մեյմունցի՛մ ռաստ էկավ: Տե-սավ, օր առ՛ջ էկեր էր, մեյմունցի ծա՛քբեր կուտեր: Մարթն խընդ առ՛ջ տեսավ, վա՛խեցավ, մեկ էնու ծենո՛վ բոռաց: Բոռալու մե՛ջ առ՛ջ էնու մոտեն վա՛խեցավ, դո՛րսվան՝ առ՛ջն փախավ: Կապիկ էկավ, էնու մընացած ծա՛քբեր ժողվեց, տարավ էնու պընա՛ն մե՛ջ:

Տառցավ էկավ, մարթուն ասաց. - Մա՛րթ, տա՛ւ ի՛մ ծա՛քբեր առ՛ջուց ազատեցիր, առ ի՛մ մոտեն փըշու՛մ պուրթ, է՛հ, ժա՛մա-նակին թե օր նեղ տեղ մ՛ի՛նես, կրակ տաս ի՛մ պըրթին, ես քյե կը խասի՛մ:

Է՛ն ժա՛մանակ մարթն առեց ու գյընա՛ց:

Գյընա՛ց, խասավ քա՛ղաքը՛մ, մըտավ մեկ պառվու՛մ տուն, ասաց. - Մարե՛, էսիկ Թա՛չկաթ քա՛ղաք՞քյն ի:

Ասաց. - Ջավա՛կս, Թա՛չկաթ էսա քա՛ղքից մեկ ամիս կիսու ճա՛մքա՛խ գա՛տն ի:

Ասաց. - Ապա էսա քա՛ղքի անուն ի՞նչ ի:

Ասաց. - Էսա քա՛ղքին Թի՛ման կասեն:

Ասաց. - Տա՛ւ հո՞ւր կերթաս Թա՛չկաթ, տըղա՛:

Ասաց. - Տ՛երթա՛մ թակավորու ախ՛ջըկե խետ փորժըվի՛մ, բա՛լկո առի՛մ, գա՛մ ի՛մ թակավորին:

Ասաց. - Տա՛ւ չըս կանա վըր էնու: Էնու ճո՛ջ քուր ըստա՛ է, գյը-նա՛, խընդ էնու փորժըվի, թի կարցա՛ր, գյընա՛ խընդ պըստիկ քուր: Թի չըկարցա՛ր, չըխո քու վիզ կը կըտրա:

Ծառեն էլա՛վ, գյընա՛ց թակավորի ախ՛ջըկե մոտ, խառցուց, ասաց. - Քա՛ւ անուն ի՞նչ ա:

Ասաց. - Ի՛մ անուն Նա՛թիշտ ա:

Ասաց. - Նա՛թի՛շտ, էկեր եմ խընդ քյե փորժըվելու, խի քու փորժ ինչպե՞ս ա:

Ասաց. - Ի՛մ փորժ էնպես ա՝ տա՛ւ պաղկըվես, թի ես չըկիտցա՛ տա՛ւ ո՞ր տեղն էր, ես հաղթվա, դո՛րսվան ի՛նչ գյիտես, խընդ ծիկ էրա, կառնիս, կը տանիս, ի՛նչ գյիտես, էրա: Թի խանեցի, չըխո քու վիզ կը գանի՛մ:

Ասաց. - Չըխտ ես իկեր եմ, օր խընդ քյե փործըվիմ: Ես կեր-
թամ պաղկըվիմ:

Ասաց. - Լա՛վ, գյընա՛ պաղկըվի՛:

Տըղեն գյընաճ պառվու տուն, ասաց. - Պառա՛վ, տեղըմ չու-
նի՞ս, ես հեսօր պաղկըվիմ էն տեղ:

Ասաց. - Գյընա՛ խավերու տուն պաղկըվի:

Տըղեն գյընաճ, խավերու տուն պաղկըվա՛վ չուր կեսօրին,
կեսօրին էլա՛վ, գյընաճ:

Ախչիկ ասաց. - Տաւ պաղկըվեր էր պառվու խավերու տուն:

Տըղեն հըզգաց, ասաց. «Վալլա՛, եսի իմ վիզ կը գանի, էնի
ի՞նչ գիտցա՛վ, թի ես պաղկըվեր ի էն տեղ»:

Ախչիկ ասաց. - Գյընա՛, մեկ էլ պաղկըվի, իրեքյ անգամ ի իմ
շա՛րթ:

Տըղեն գյընաճ ծովու պըռուկ, ծըկան թեբուռ էտու կրակ,
ծուկ շուտ մ'էկա՛վ, ասաց. - Ի՞նչ կուգես:

Ասաց. - Կուգեմ, օր տաւ ծի չում կեսօրին պախես քաւ պե-
րանը վե, օր թակավորի ախչիկ զի չըտեսնի, թի չէ իմ վիզ կը
կըտրա:

Թակավորի ախչիկ էլա՛վ, տես-տեն աչկեց, տըղեն եփ օր
էկա՛վ, ասաց. - Ես ո՞ր տեղն էր պաղկըվե:

Ասաց. - Տաւ ծովու ծըկան պերնի մեչն էր:

Տըղեն ասաց. - Իմ խընթիր լըմենցա՛վ, էսա դարուն իմ վիզ
կը գանի, պըռծա ախշըրքից:

Ասաց. - Մեր փործ մընաց մեկ:

Էն մեկէլ օր տըղեն գյընաճ մըտ կապիկ:

Ասաց. - Ի՞նչ կուգես:

Ասաց. - Կուգեմ՝ տաւ չուր կեսօրին ընծի պախես, օր մարթ
ծի չըտեսնի:

Կապիկն ի, մըտուց էնու ախնը վեր, էնու ծաքյեր, հինքըն
նըստան պընան պերնի հառեմ:

Թակավորի ախչիկ ո՞ր տեղ աչկեց, չըկարցա՛վ կընդեր էր:

Էն ժամանակ, եփ օր էկա՛վ տըղեն, ասաց. - Ես ո՞ր տեղն էր
պաղկըվե:

Ախչիկ չըկիտցա՛վ:

Ախշիկ, օր չըկիտցավ, էխան ուր մատի մատնիկ, էտու էնոր, ասաց. - Ա՛ռ էսա մատնիկ, կուզես ձի ա՛ռ, կուզես ընձի գա՛ր, գի մատանին տըվի:

Տըղեն մատնիկն մըտուց ուր մատ:

Ասաց. - Ես կերթամ Թաչկաթ խընդ քու քուր: Թի տառցա, քյե կը տանեն, թի չէ, չըխո իմ վիզ կը կըտրա, կը պըռճի:

Տըղեն եփ օր գյընաց Թաչկաթ, շատ գատն ճամբախ էր:

Օրըմ գյընաց, մեկէլ օր խավքիւ թերուռ ինգավ միտ:

Թերուռ էտու կրակ, խավքյ էկավ, ասաց. - Ի՞նչ կուզես:

Ասաց. - Քյենե կուզեմ՝ տիւ ձի տանես Թաչկաթ:

Խասավ Թաչկաթ քաղքյի կուշտ, էճավ տակ, խավքյն թըռավ, ինքյն էլավ հուշիկ-հուշիկ գյընաց քաղաքյ: Տեսավ, օր մեկ ըխթիյար մեկ պըստիկ կաֆաս մ՛ուր ծեռ, ճընջըղուկըմ մըչ կաֆասին, էտա ըխթիյարի ծեռ էկավ լաճու առեն:

Չասե՞ս՝ էտա ըխթիյար էն ըխթիյարն ա, օր միշտ լաճուն էրագի մեչ կը գա:

Ըխթիյար ասաց. - Տըղա՛, դի՛ր կերթաս:

Ասաց. - Կերթամ էսա քաղաքյ՝ թակավորի ախշըկե խետ փորճըվիմ:

Ասաց. - Էսա ճընջըղուկ չըս առե՞ր:

Ասաց. - Ի՞նչ տ'ենեմ, զի պըկեր չիգա:

Ըխթիյար ասաց. - Քյե փարով չըմ իտա, ա՛ռ, տա՛ր, տիւ միքա մարթ ես, քիւ բեհն էլնի խետ:

Տըղեն առավ ճընջըղուկ, տարավ, ասաց. - Տանեմ էրթամ:

Ճամխի խետ կը տեսնի, օր կաֆաս կը զըրիւցա:

Իշկեց. էնու կըշտըներ մարթ չըկա:

Տըղեն զարմացավ, ասաց. - Ջա՛նըմ, էսի Ի՞նչ ա, կիշկեմ, իմ չորս պիւր մարթ չըկա ու զըրոցի ծեն կը գա:

Տըղեն իշկեց կաֆասի մեչ, ճընջըղուկ ասաց. - Ընչի՞ կը գարմանաս, ես իմ կը զըրիւցեմ: Էն ըխթիյար էն ըխթիյարն էր, օր միշտ էրագի մեչ կը տեսներ, օր ձի էտու քյե: Եփ օր կերթանք թակավորի ախշըկե մոտ, տիւ պարս կը տաս թակավորի ախշըկեն, ձի տի տըռան հիտս, գյընա պարս տու: Օր քիւ պարս չառավ, տիւ տանջի, տըռան պարս տու: Ես չըխո աներուութ եմ, դիրսվան կը սկսիմ զըրիւցել:

Տըղեն առավ ճընջըղուկ, գյընաց թակավորի ախչըկե մոտ:
Գյընաց խանավ տհու, ինքյն մըտավ ներս, ճընջըղուկ էտի տհու:

Ասաց. - Պահ'ըն քյե, թակավորի՝ ախչիկ:

Ախչիկ ծեն չիխան, չըզըրհուցեց:

Տանցավ, պահ'ըն էտու տըռան, ասաց. - Պահ'ըն քյե, թակավորի ախչըկե՝ տհու:

Տհու ասաց. - Ասծու պահ'ըն էկար: Թակավորի՝ ծառա, ի՞նչ գործ ունես էտա հիմար ախչըկե խետ: Քյե պես խազար ջըհելի գյըլիխ ա կըտրե:

Թակավորի ախչիկ ծըռավ, ինքյն ուր ասաց. «Ջահ'ըն, էսա տհու ի՞նչըխ էտոր պատասխան կը տա: էսա մարթ խրիշտա՞կ ա, ի՞նչ ա»:

Ասաց. - Տհու՛ն, մեկ պահ մ' ասա, ականջ ընենք:

Ասաց. - Օր լավ մըտիկ էնեք, կասեմ:

Ասաց. - Ժամանակին խոր մ'իրեք տըղա կելնի: Էնոնց խոր մեյ խատ անգյին խավքյըն կելի: Տըղեկներ օրըն ասին ուրենց խոր. «Դահ'ո՛, խալիվորցեր ես, մեռնելու ժամանակ էսա խավքյ ո՞ր մեկին տը տաս»:

Խեր ասաց. - Ծե հըմեն մեկին խարիր հիսուն կուռուշ փահ'ըն կը տամ, իրեքյտ էլ գացեք կուրբաթ, որ օր հավիլի փահ'ըն էպե, էն խավքյ էնոր կը խասնի:

Իրեքյ ախպերն էլ, առած ամեն մեկին խարիր հիսուն կուռուշ փահ'ըն, խընդրաց գացին: Գացին, խասան մեկ տեղըն, ճամբախ իրեքյ ճող պահ'ըն:

Ախպըրներ իրարու ասին. - Էկե՛ք, մեկ էնա ճամխով էրթանք, մեկ՝ էնա ճամխով, մեկ՝ էսա ճամխով: Լե իրեքյ տարի պայմանով, իրեքյ տարուց ետ եփ օր կը տաննանք, ո՞ր շոտ գա, թ'ըստան նըստի, աչկա, չու՛ն էմեկելոնքյ գան:

Եփ օր իրեքյ տարի թըմըմավ, հանճին՝ ճոչ ախպեր էկավ, էն տեղ նըստավ: Քանի մ'օր ընցավ, միչնեկ ախպեր էկավ, քանի մ'օր էլ ընցավ, պըստիկ ախպեր էկավ:

Էն տեղ մեկտեղան ու ասին իրարու. - Ախպերներ, մեզնից ո՞ր մեկն ա շատ փահ'ըն պերե, օր խավքյն առնի:

Ճոչ ախպեր ասաց. - Վալլա՛, ես փահ'ըն չունիմ, լե համա մարիֆաթըն սովորե եմ, օր ծի քիմիյա ա:

Ախպըրներ ասին. - Ի՞նչ ա քու մարիֆաթ:

Ասաց. - Ես մեկ տարվան ճամբան զանոն կը խասկընամ՝ խի էն տեղ ի՞նչ կեղի, ի՞նչ չեղի: Իմ մարիֆաթ էնի յա:

Միչնեկ ախպեր ասաց. - Ես էլ փարնա չըմ պերի, համա ես էլ մարիֆաթըմ սովրեր եմ, էն էլ ծի շատ օգուտ ա:

Ասաց. - Ի՞նչ ա քու մարիֆաթ:

Ասաց. - Ես էմալ հեքյըմութեն սովրեր եմ, օր մեռնող մարթու լեզվեն խասիմ, կը ժըրըցուցեմ:

Էն ժամանակ պըստիկ ախպեր խառըընեցին:

Պըստիկ ախպեր ասաց. - Ես էմալ փոսթանջութեն սովրեր եմ, օր մեկ ամսըվան ճամբան մեկ օր կերթամ:

Ախպըրներ ճոչ ախպիր ասին. - Արի՛ իմացի՛ խի մեր խոր խավըյ սա՞ղ ա, թի՞ խատի:

Ճոչ ախպեր ականջ էտի գյետնին կես սահանթի չափ, էլա՛վ, ասաց. - Ախպըրներ, մեր խոր խավըյ խիվանդ ա, համա մըընացեր ա իրեքյ սահանթ, օր խատի:

Միչնեկ ախպեր էնու ծոցեն շուշե՛մ տեղ իխան, ասաց. - Երանի էսա տեղից մե փշու՛մ ինգեր էնու կըտըցին, էն տը ժրեր, չէր խատնի:

Պստիկ ախպեր ասաց. - Իրեքյ սահանթ ժամանակ կա:

Ասաց ու տեղն առավ, վա՛զավ: Երկու սահանթ գյըմաց, խասավ տուռ, տեղ էտի խավըյի կըտըցին: Խավըյ տեղ կուլ էտու, սաղցավ:

Մընաց չուր քանի՛մ օր, էն մեկէլ երկու ախպերներն էլ էկան, խասան տուռ:

Ասաց. - Մըկա իրեքյ ախպերներ վեր էսա խավըսուն կը կըռվին, էնիկ կասա՛՝ ծի կը խասի, էնի կասա՛՝ ծի կը խասի: Թակավորի՛ ծառա, օր տու էղնիս տանավոր, տու էտա խավըյ վի՞ր տը խասուցեր:

Ասաց. - Ես ճոչ ախպիր տը խասուցեր, օր էնի հիմցավ՝ խավըյ խիվանդ էր:

Տուռ ասաց. - Եսն էղի, կը խասուցի միչնեկ ախպիր, ընչի օր հեքյիմ էնի յա:

Թակավորի ախչիկ չըտիմացավ, ասաց. - Տու երկուսն էլ հիմար եքյ, օր հիմար չեղեքյ, խավըյ պըստիկ ախպիր կը խասուցեքյ: Օր էնի տեղ չըտաներ, խասուցեր, խավըյ ի՞նչըրս տ՛ազատվեր:

Ծառեն ասաց ախչըկան. - Ձի հանդը վար, իմ նշանակ տո՛ւ:
Ախչիկ ասաց. - Եսա մեկ անգամ, դըհա էրկու անգամ էլ կա:
Էլձվ, գյընաց, առավոտուն մեկ էլ էկավ:

Թակավորի ախչիկ էլձվ, տառ ճըղեց, հուրհուշ տուռ մ'էլ
էպի, իտի վերեն:

Տըղեն էկավ, խավք տըղին ասաց. - Եսա տըրհուն ծի տի՛ր
աթոռի տակ:

Ծառեն ասաց. - Պա՛րև քյե, թակավորի՛ ախչիկ:

Ծեն չէտու, պա՛րև չառավ:

Պա՛րև էտու աթոռին, աթոռ պա՛րև առավ:

Ասաց. - Թակավորի՛ ծառա, ի՞նչ գործ ունիս խընդ էտա հի-
մար ախչըկեն:

Տըղեն ասաց. - Հե՛յ աթոռ, պա՛մ ասա, մե քիչ ականջ
էնենքյ:

Ասաց. - Կասեմ, ամա լավ ականջ էրեքյ:

(Պատմողը պատմեց իրեք իմաստուն եղբայրների պատ-
մությունը, ուղտի, հղի կնոջ և զիրենք դատող դատավորի անհա-
րազատ զավակ ըլլալը, հացի արնոտ ըլլալը, և մսի շան միս ըլ-
լալը)⁷:

- Մըկա, թակավորի՛ ծառա, վո՞ն ա էտոնցից հիմաստուն:

Թակավորի ծառեն ասաց. - Շոչ տըղեն ա:

Աթոռն ասաց. - Միչնեկն հավելի խելացի էր:

Թակավորի ախչըկե սիրտ չըտարավ, ասաց. - Տու քանի՛մ
հիմար եքյ, պըստիկ տըղեն ա հիմաստուն:

Ծառեն ասաց. - Թակավորի՛ ախչիկ, տառ հանդը վար,
դիրսվան հանձնվի:

- Չէ՛, մընացե մեկ անգամ էլ, եփ օր հանդը վա՛ կը
հանձնվեմ:

Մընաց չու՛մ առավոտուն, տըղեն էկավ:

Թակավորու ախչիկ զաթոռ ճըղճըղեր, էնդուց թալեր:

Խավքն ասաց. - Ձի տի՛ր էնու մինդըրի տակ:

Էտիր մինդըրի տակ: Պա՛րև էտու թակավորի ախչըկեն,
չառավ:

Պա՛րև էտու մինդըրին, մինդա՛ր պա՛րև առավ, ասաց. - Թա-
կավորի՛ ծառա, էսա էրկու տիր տառ թակավորի ախչըկեն տարար,

⁷ Ծ.Բ.

էսա հիտին տիր փորձըվել քու հիմարութեն, թող քյե հանձնվի:

Ասաց. - Մինդար, մեկ պատմութեն մ' էրա՛, ականջ էնենք:

Ասաց. - Ես պատմութեն էնեմ, տալք ականջ էրեք: Ժամանակով թակավորում կեղի, էնոր ոսկե լապըզտրակըմ կեղի, ոսկե թագի՛մ, օր ոսկե սինու մեչ տըրված՝ միշտ կը լարեն հիրարու էտև:

Թակավորում իրեք լաճ կեղի:

Օրըմ խոր կասեն. - Դարդ, քու մեռնելուց ետ էսա ոսկե լապըզտրակ, ոսկե թագին վի՞ր կը խասնի:

Խեր ասաց. - Գացե՛ք էնա երկիր, էնտեղ մարթ փորձող կա, փորձըվեք: Վո՛ն օր հիմաստուն էղավ, էտա պան էնու կը խասնի:

Էլան, գացին փորձողի մոտ:

Ասին. - Մե փորձի, խի մեզնից ո՞ր մեկն ա հիմաստուն, օր մեր խոր ոսկե լապըզտրակ, ոսկե թագին խասի էնոր:

Փորձող էպե, ծավար էլից սամավարի մեչ, եռցուց, չայնիկն չայ էթալ, շուշեք պատրաստեց: Էտա իրեք ախպիր կանչեց էպե, նըստուց էնտեղ:

Ծառեն ասաց. - Սամավար կեռա, չա՛յ պե էսա մարթերուն:

Ախպըրներ իշկեցին սամավար, ճոչ ախպերն ասաց. - Ավ կոտան (այս ծեծած է)⁸:

Միչնեկ ախպեր ասաց. - Ավ բը դաստե խո թավ տանա (ծեռքով խառնված է):

Պըստիկ ախպեր ասաց. - Ազ տը բեժիմ ան տան ան (ես կասեմ, որ այս ծավար է):

Մինդար ասաց. - Թակավոր՛ւ ծառա, էտա փորձող խասուց պըստիկ ախպիր: Տու՛ն էղիր՝ ո՞ր մեկուն տը տեր:

Ասաց. - Ես էղեր, տը տեր միչին ախպիր:

Էն ժամանակ թակավորի ախչիկ չըտիմացավ:

Ասաց. - Տու՛ն էլ հիմար ես, էտա տանավորն էլ հիմար էղե: Էնոնցից խելացին ճոչ տըղեն ա: Օր էնի ասաց՝ էսի ծեծած ան, էն մյուս ախպեր կիտցավ, օր ծավար կը ծեծին, հալբաթ ծեռնով էլ հիրար կը տան: Պըստիկ ախպերն էլ կիտցավ, օր ծավար ա սամավարի մեչ:

⁸ Արտահայտությունները քրդերեն լեզվով են, բացատրությունը բանահավաքինն է (Ծ.Կ.):

Թակավորու ծառեն ասաց. - Թակավորո՛ւ ախջիկ, դիրսվան քիւ հանդըրվելու նշան տու:

Էն էլ էլանվ, մատնիկ էխան, էտու: Ջույար գյընաց թակավորուն, թե քիւ ախջիկ հանդըրվավ: Թակավոր շատ ուրախացավ:

Ասաց. - Էն ախջիկ էնքան մարթիւ գյըլիխ կըտրե, օր մեղաց արյան տակ մըտանք:

Խընդ ախջըկեն ջըհեգ-մըհեգ էտիր:

Ասաց. - Թակավորի՛ ծառա, ախջիկ փըսակեմ վեր քյե:

Ասաց. - Չէ՛, ես իմ թակավորի խամար կը տանիմ:

Առավ զախջիկ, ինգանվ ճամբան: Ծամբան Էնու էր, չըկաներ խասներ, խավքիւ թերուռ միտ ինգանվ, էտու կրակ, խավք խասավ:

Ախջիկ, ինքյ նըստան խավքիւ թներու վերեն, տարավ էնու թակավորի երկիր էտիր:

Ախջիկ ասաց. - Ծառա՛, տիւ շատ սիրուն, հիմաստուն ես, ես քյե կուզիմ ասիմ՝ թակավորին կամք չըմ իտար:

Ասաց. - Չէ՛, ես ծառա եմ, թի ես քյե էնու խամար չըտանիմ, չըթողնի իմ խոր երկրի մեջ մընամ, իմ վիզ կը գանի, քիւն էլ խետ:

Չուր գանցին, ջույար էկավ հանճաներ, թե թակավոր մեռեր ա:

Ծառեն թակավորի ախջիկ փըսակեց էնու վերեն, իրեքյ-չորս օր խաղ-խաղտուն էրաց, էնոնք խասան ուրենց մըրագին:

